# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 օգոստոսի 2026թ. թիվ 650-Ա

## Ն.ՄԵՀՐԱԲՅԱՆԻՆ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՁՈՐԻ Ա.ԲԱԿՈՒՆՑԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 7 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 188-րդ հոդվածի 1-ին մասի, ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձևավորման, գործունեության և տնօրենի նշանակման կարգը հաստատելու մասին» թիվ 181-Ն որոշման հավելվածի 6-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2026 թվականի օգոստոսի 26-ի թիվ 646-Ա որոշումը և հաշվի առնելով Ն.Մեհրաբյանի համաձայնագիրը՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի Ա.Բակունցի անվան թիվ 7 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ Նարինե Վաչիկի Մեհրաբյանին 2026 թվականի օգոստոսի 28-ից նշանակել «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի Ա.Բակունցի անվան թիվ 7 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ մինչև օրենքով սահմանված կարգով մրցույթի արդյունքում նոր տնօրենի ընտրությունը:

2. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի Ա.Բակունցի անվան թիվ 7 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հաշվապահին՝ «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի Ա.Բակունցի անվան թիվ 7 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կանոնադրությամբ սահմանված տնօրենի պարտականությունների իրականացման համար Նարինե Մեհրաբյանին տալ լրավճար «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի Ա.Բակունցի անվան թիվ 7 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի աշխատավարձի 30%-ի չափով:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ

Recoverable Signature

X

Ստորագրող
ԱՐՍԵՆ ՂԱՐԻԲՅԱՆ
2414880046

2026-08-27 17:14:57 GMT+4

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Signed by: GHARIBYAN ARSEN 2414880046 Ա.ՂԱՐԻԲՅԱՆ

2026թ. օգոստոսի 27
ք.Վանաձոր